ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 27 հուլիսի 2021թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Գրիգորյանի

Անդամակցությամբ՝ Ե. Խունդկարյանի

Ա. Վաղարշյանի

Քննության առնելով Ռաֆիկ Մելքոնյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Ռաֆիկ Մելքոնյանը դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հուլիսի 13-ին)՝ խնդրելով.

«*Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 145 հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 4-րդ, 162-րդ, 164-րդ հոդվածներին հակասող՝ այն մասով, որ մասով ՀՀ Արդարադատության նախարարին /լիազոր մարմնին/ վերապահված է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն*»:

2. Դիմողը, որն իր նկատմամբ 2021 թվականի մայիսի 6-ի թիվ ԲԴԽ-20-Ո-Կ-08 որոշմամբ կարգապահական պատասխանատվության մասին որոշմամբ նկարագրված փաստակազմով պաշտոնավարել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանի դատավորի պաշտոնում, նշում է, որ Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի մայիսի 6-ի թիվ ԲԴԽ-20-Ո-Կ-08 որոշմամբ իր նկատմամբ հայտարարվել է խիստ նկատողություն: Ռ. Մելքոնյանի կարծիքով, գլխավոր դատախազը և արդարադատության նախարարը գործի են դրել մի կառուցակարգ, որը հետապնդում է առաջին ատյանի դատարանների՝ քրեական գործեր քննող դատավորների գործունեությունը գործադիր իշխանության կողմից վերահսկելի դարձնելու նպատակ, և այդ կառուցակարգի օրենսդրական հիմքը արդարադատության նախարարի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունն է: Ըստ նրա՝ նման պայմաններում իրեն Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի մայիսի 6-ի թիվ ԲԴԽ-20-Ո-Կ-08 որոշմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելը խախտել է իր՝ «*իբրև մարդու այնպիսի հիմնական իրավունքներ, ինչպիսիք են. մարդու ազատ գործելու իրավունքը, պատշաճ վարչարարության իրավունքը, նաև՝ համաչափության և որոշակիության սկզբունք*ները»: Ի լրումն նշված անհատական իրավունքների խախտումների մասին հայտարարության՝ դիմողը հայտնել է նաև, որ արդարադատության նախարարի, գլխավոր դատախազի և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վիճարկվող իրավադրույթների հիմքով գործող կառուցակարգերը հանգեցնում են Սահմանադրության 4, 162 և 164-րդ հոդվածների խախտման:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և կից ներկայացված նյութերը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողը որևէ հիմնավորում չի ներկայացրել վիճարկվող իրավական դրույթի՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) 145-րդ հոդվածի կիրառմամբ իր՝ մարդու ազատ գործելու և պատշաճ վարչարարության անհատական հիմնարար իրավունքների, ինչպես նաև այդ իրավունքներին միջամտության դեպքերում համաչափության և իրավական որոշակիության սկզբունքների խախտումների մասին:

Անդրադառնալով դիմումում որպես հիմնավորում ներկայացված Սահմանադրության 4, 162 և 164-րդ հոդվածների ենթադրյալ խախտումներին՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ այս մասով ապահովված չէ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու իրավունքի պայման հանդիսացող՝ «*Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման*» հանգամանքը, քանի որ դիմողի կողմից վկայակոչված սահմանադրական դրույթները չեն պարունակվում Սահմանադրության 2-րդ գլխում և չեն հանդիսանում նույն գլխով նախատեսված անհատական հիմնարար իրավունքների վերաբերյալ սահմանդրական կարգավորումներ նախատեսող նորմեր, այլ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին (Սահմանադրության 4-րդ հոդված), արդարադատության իրականացմանը (Սահմանադրության 162-րդ հոդված) և դատավորի կարգավիճակին (Սահմանադրության 164-րդ հոդված) վերաբերող սկզբունքներ և նորմեր են: Դիմողը բովանդակային առումով չի ներկայացրել, առավել ևս պատշաճ փաստարկներով չի հիմնավորել, թե Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր ո՞ր իրավունքն է խախտվել վիճարկվող իրավական դրույթի՝ նշված սահմանադրական դրույթներին ենթադրյալ հակասության համատեքստում, ինչը վկայում է դիմումի ակնհայտ անհիմն լինելու մասին, քանի որ բացակայում է նաև պատճառահետևանքային կապը վիճարկվող նորմի և դիմողի վերը վկայակոչած սահմանադրական իրավունքների միջև:

4. Սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ **նորմատիվ իրավական ակտի կիրառումը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման**՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերը նշված նորմից բխում է, որ դիմողը միաժամանակ պետք է նաև հիմնավոր և պատշաճ ձևով փաստարկի իր կողմից վիճարկվող նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության արդյունքում իր կոնկրետ սահմանադրական իրավունք(ներ)ի ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթ(ներ)ի կամ դրա(նց) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ, որոնք չպահպանելը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ուսումնասիրելով դիմումը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը հանգում է այն եզրակացության, որ դիմումում չեն պահպանվել Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի վերոնշյալ պահանջները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 4 և 5-րդ մասերով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Ռաֆիկ Մելքոնյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Վ. Գրիգորյան

Դատավորներ՝ Ե. Խունդկարյան

Ա. Վաղարշյան

27 հուլիսի 2021 թվականի

ՍԴԴԿՈ-45